իր բոլոր կեանքի ընթացքին կարծես անոնցմով ապրած է և հիմա իր հասունացեալ հասակին դեռ աւելի կը փարի անոնց իբր իր կեանքի արևին։

Զգայնիկ թախծութիւն մը, որ կ'ազդուի բոլոր իրերէն։ Գիտէ թափանցել առարկաներու խորը, տեսնել ու վեր հանել այն կեանքը որ պահուած է անոնց խոշորութեան և նիւթին մէջ, որով առարկաները բոլորն ալ թրթռացում և յուզում կը դառնան։ Ա՜յնքան ալ հաղորդական է որ կարելի չէ չազդուիլ։ Կայ եզական շնորհք մըն ալ այդ զգայնութեան մէջ, որ գիւղի կանաչութենէն կրնայ իր մէջ թափուած ըլլալ։

Ոճի մոգութիւնը՝ որ այնքան գրաւիչ է։ Հռետորական էջեր պակաս չեն, ուր հեղինակը երկարապատում է ու կը տեսնուի ճիգը լեցնելու և ընդարձակելու. բայց զգացուած մասերուն մէջ ոճը իր առատազեղ և տարածուն ընթացքով ալ թովելու ոյժ ունի։ Հատորին ամենէն սիրուն և հմայքոտ կտորն է գուցէ «Մեր տունը» գլուխը, ուր ամէն ինչ հոգիացած է, առարկաներն և մթնոլորտը, և որոնք կը հրճուին կամ կը խռովին։

Մարդ կը սպասէ տեսնելու թէ յաջորդ հատորներուն մէջ Ահարոնեան ինչ նորութիւն պիտի դնէ։

Հ. Կ. Ք.

---

# ՀՕԿ

### ՀՆԴԿԱՍՏԱՆԻ, ԵԳԻՊՏՈՍԻ, ՄԻՋԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ, ԲԱԼՔԱՆՆԵՐԻ ԵՒ ՄԻՋԱԳԵՏՔԻ ԶԱՆԱԶԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ԱՊՐՈՂ ԳԱՂՈՒԹԱՀԱՅԵՐԻՆ[1]

Լրանում է մի ամբողջ տարի այն օրից, երբ Խորհրդային Հայաստանի երկրորդ մայրաքաղաքը – այժմեան Լենինականը – պատմական Կումայրի – Գումրին – ամբողջ Շիրակի դաշտի հետ միասին ենթարկուեց երկրաշարժի անակնկալ աղէտին, որի հետեւանքով քայքայուեցին 50ի չափ գիւղեր ու 60.000ի չափ բնակչութիւն մնաց անտուն, բաց երկնքի տակ.

Շիրակի բնակչութեանն հասած այս մեծ ու ծանր աղէտի լուրն առնելուն պէս Խորհրդային դաշնակից հանրապետութիւններն առատօրէն աղէտի վայրն ուղարկեցին իրենց անմիջական օգնութիւնը՝ անհրաժեշտ կենսամթերքներ, դեղօրայք, բժիշկներ, գթութեան քոյրեր, շորեր, շինանիւթերից՝ տախտակեղէն և հարիւրաւոր վրանների համար անհրաժեշտ պարագաներ, Իսկ Հայաստանի բանուորա-գիւղացիական իշխանութիւնն իր հերթին բոլոր միջոցները ձեռք առաւ տեղաւորելու բաց երկնքի տակ մնացած բնակչութեան մեծագոյն մասին հարևան աւաններում և գիւղերում, ապահովելով միաժամանակ դուրսը մնացած և վերահաս ձմրան սառնամանիքներին ենթակայ անասունները՝ պահանջուող քանակութեամբ կերով, ցրտերից ժամանակաւոր կերպով պատսպարուելու շինութիւններով և այլն.

Ամերիկահայ և եւրոպահայ գաղութները մեր հեռագրական կոչի համաձայն անմիջապէս կազմակերպեցին յատուկ հանգանակիչ յանձնաժողովներ և ՀՕԿ-ի մասնաճիւղերի նախաձեռնութեամբ ու ղեկավարութեամբ իրենց հերթին կարողացան ժամանակին բաւականաչափ գումարներ հանգանակել և անմիջականօրէն փոխադրել Կենտրոնական Վարչութեանս Լենինականի վերաշինութեան գործին մասնակցելու համար. Այժմ Կենտրոնական Վարչութեանս տրամադրութեան տակ է 146,000 ռուբլու Լենինականի վերաշինութեան ֆոնդը, որով առաջիկայ գարնանը պէտք է ձեռնարկուի Շիրակի աղէտահար բնակչութեան չքաւորագոյն ընտանիքների տների կառուցումը. Այսպիսով ուրեմն ապահովուած է 300–400 չքաւոր գիւղացիների բնակարանների կառուցումը. Սակայն Կենտրոնական Վարչութիւնս նպատակ ունի այդ բնակարանների թիւը հասցնել կրկնապատիկին, այնպէս որ, ամէն գիւղում մեր միջոցներով կառուցելի տների թիւը հասնի գոնէ 10–15ի.

Այս նպատակը, որ դրել է Կենտրոնական Վարչութիւնս, իրագործելի է, որովհետև մի շարք մեծ և տնտեսապէս աւելի բարւոք վիճակի մէջ գտնուող հայկական գաղութներ ցայժմ չեն մասնակցած ձեռնարկուած ընդհանուր հանգանակութիւններին, ՀՕԿ-ի կազմակերպուած մասնաճիւղեր չունենալու և առհասարակ Խորհրդային Հայաստանի հետ թոյլ և կամ որևէ կապի բացակայութեան պատճառով.

Արդ, որքան շահագրգռուած է Խորհրդային հայրենիքի բարօրութեան հարցով, որքան օգնութեան անկեղծ ցանկութիւն է ցուցաբերել Շիրակի աղէտահար գեղջուկի հանդէպ Ամերիկահայը, Ֆրանսիահայը, Անգլիահայը, Բելգիահայը և նոյնիսկ իր տնտեսական աննախանձելի վիճակով՝ Յունահայը և այլն, մենք կարծում ենք, որ նոյնքան էլ անկեղծ պիտի լինի Եգիպտահայը, Հնդկահայը, Միջագետքում, Միջին Եւրոպայում և Բալքաններում նիւթական համեմատօրէն բար-

1. Խմբագրութեանս ուղղուած էր այս կոչը որպէս զի հրատարակուէր, նոյն պատճառաւ կ'արտատպենք հոս. մեր Հանրապետութեան կացութիւնը ծանօթ է ամենուն, որով աւելորդ անդրադառնալ անոր վրայ.

digitised by A.R.A.R.@

ւոք վիճակում ապրող գաղութահայերը, որոնք հասկանալի պատճառով չեն կարողացել մասնակցել Լենինականի վերաշինութեան օգտին ձեռնարկուած հանգանակութիւններին։

Կենտրոնական Վարչութիւնս առաջիկայ գարնան սկսում է իր շինարարական գործը աղէտին ենթարկուած շրջանում և այդ գործին նա դիմելու է ամբողջ գաղութահայութեան անունից, խորապէս համոզուած լինելով, որ Կենտրոնական վարչութեան կոչին տակաւին չարձագանգած գաղութահայերը փութալու են իրենց նուիրաբերութիւնները բերել Շիրակի աղէտահար բնակչութեան, հնարաւորութիւն ստեղծելով մեզ համար չսահմանափակուելու 4–500 տներ կառուցելու մաշտաբով, այլ այդ պլանն ընդարձակելու և կրկնապատկելու։

Այսպիսով ուրեմն, Կենտրոնական Վարչութիւնս այն հաստատ համոզումն ունի, որ հեռաւոր Հնդկաստանի, Եգիպտոսի, Միջագետքի, Միջին Եւրոպայի և Բալքանների բազմահազար բարւոք վիճակ ունեցող գաղութահայութիւնը չպիտի յետ մնայ Ամերիկահայից, որ այնքան լիաբուռն է գտնուել դէպի երկրի բնակչութեան այն հատուածը, որ ենթակայ է եղել երկրաշարժի ծանր աղէտին 1926թուի հոկտեմբերի 23-ին։

Պէտք է աճապարել, մինչև առաջիկայ գարուն մեր վերաշինական աշխատանքների դիմելը, ձեր նուիրաբերութիւնը տալ։ Այդ նպատակով արդէն կազմուած 146,000ռ. ֆոնդը կը կրկնապատկուի, եթէ բոլոր գաղութահայերն իրենց պարտքը կատարեն Շիրակի աղէտի հանդէպ։

Մեր երկրին հասած աղէտն անշուշտ մեծ է եղած ու ծանր, ու մէկ մասի հասցրած օգնութեամբ չէ միայն, որ պէտք է 50-60,000 բնակչութեան տասնեակ միլլիոնների հասնող կորուստը լրացնել, այլ պէտք է հանդէս գալ բովանդակ ուժերով ու այդ ուժերի զօրաւոր լարումով։

Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը, խորհրդային դաշնակից հանրապետութիւնները, Հիւսիսային և Հարաւային Ամերիկայի, Եւրոպայի և այլ երկիրների գաղութահայ զանգուածները սրտաբուղխ և առատօրէն օգնեցին և շարունակում են մասնակցել Լենինականի վերաշինութեան գործին· հերթն այժմ Հնդկահային, Եգիպտահային, Միջագետքի, Կենտրոնական Եւրոպայի և Բալքանների գաղութահայերինն է, որոնք անշուշտ պիտի արձագանգեն խորհրդային հայրենիքից իրենց ուղղած Հայաստանի Օգնութեան Կենտրոնական Կոմիտէի այս կոչին։

Օգտուելով առիթից մենք միաժամանակ կոչ ենք անում գաղութահայ հատուածների տարբեր վայրերում գտնուած աշխատաւոր զանգուածներին, կազմակերպել ՀՕԿ-ի մասնաճիւղեր և տևական ու սերտ կապ պահպանել Վարչութեանս հետ։ ՀՕԿ-ի բուն նպատակն այն չէ, որ բնական պատահարների և այլ աղէտների ժամանակ առատ օգնութեան հասնի աղէտահարներին· ՀՕԿ-ը մեր երկրի շինարարութեան և ինդուստրացման գործում ունի իր կատարելիք կարևոր դերը։ Արդէն իր գոյութեան ընթացքում, արտասահմանից և երկրի աշխատաւոր զանգուածների կողմից տրուած օժանդակութիւններով կարևոր աշխատանքներ տարել է նա նշուած ուղղութիւններով, շինելով ջրանցքներ, տալով զանազան տեսակի օգնութիւններ մեր կուլտուրական հիմնարկներին, կազմակերպելով աւազի և խճի գործարան ու քարի արտադրութեան, հիմք դնելով մի խոշոր մեխանիքական ատաղձագործարանի, և այլն։ Որպէս զի նա կարողանայ շինարարական և երկրի ինդուստրացման ուղղութեամբ իր գործունէութիւնը աւելի ընդարձակել, պէտք է որ զանազան երկիրներում ցրուած հայ աշխատաւորները խմբուեն ՀՕԿ-ի գործի շուրջը և շարունակական նիւթական օժանդակութիւն հասցնեն Վարչութեանս։

Անմասն մնալ այն հսկայ, ստեղծագործ աշխատանքին, որ 6–7 տարուց ի վեր կատարուում է մեր երկրում, բանւորա-գիւղացիական կառավարութեան իմաստուն ղեկավարութեամբ և երկրի աշխատաւորութեան քրտնաջան ճիգերով, պիտի նշանակէր բարոյապէս և քաղաքականապէս մեռցնել ինքն իրեն։

Ա՛րդ, որպէս զի գաղութահայ զանգուածներն ևս որոշ չափով բաժնեկից համարուեն այդ ստեղծագործ աշխատանքի արդիւնքներին, որպէս զի նրանք ևս իրաւունք ունենան այդ արդիւնքներով ոգևորուելու և հպարտանալու, անհրաժեշտ է որ արտասահմանում գտնուած ամէն մի անկեղծ, խորհրդային հայրենիքի բարգաւաճման հաւատացող և նրանով ուրախացող անձ իր օգնութիւնը հասցնի այդ մեծ աշխատանքին։ ՀՕԿ-ը հանդիսանում է այն միջոցը, որով նպատակայարմար կերպով կարելի է այդ օգնութիւնը հասցնել խորհրդային Հայաստան։ ՀՕԿ-ի մասնաճիւղերն արտասահմանում այն մարմիններն են, որոնք կարող են լաւագոյն կերպով կազմակերպել օգնութեան գործը, համախմբել բոլոր անկեղծ և գիտակից տարրերին այդ գործի շուրջը և սիստեմատիկ, տևական եղանակով օգնութեան միջոցներ ստեղծելով ուղարկել դրանք Վարչութեանս՝ երկրի աշխատաւորութեան օգտին գործածելու համար։

Հայաստանի Օգնութեան Կոմիտէի
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

digitised by A.R.A.R.@